«Քանաքեռ–Զեյթուն» ԲԿ
Հ.Ներսիսյան 7
Հեռ. (010) 20-70-07
info@kzmc.am

"Kanaker-Zeytun" MC
H.Nersisyan 7
Tel. (010) 20-70-07
info@kzmc.am

N 5/14 - 150

16 սեպտեմբերի 2021թ

<<ԷՖԲԻԷՅ >>ՍՊԸ -ի

տնօրեն Էդուարդ Փոթոյանին

Հարգելի պարոն Փոթոյան

Հայտնում եմ Ձեզ, որ <<Քանաքեռ-Զեյթուն>> ԲԿ ՓԲԸ-ի /այսուհետ՝ Պատվիրատու/ և <<ԷՖԲԻԷՅ>>ՍՊԸ-ի միջև 14.07.2021թ կնքված N **ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ԱԽՏ-21/3** ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ շրջանակներում տեխնիկական բնութագրով 2-րդ չափաբաժնով նախատեսված՝ ***2.Ախտահանիչ խտանյութ՝ նախատեսված էնդոսկոպների և բժշկական նշանակության առարկաների (ԲՆԱ) ախտահանման, նախամանրէազերծումային մշակման համար***, ապրանքի մատակարարում չի իրականացվել, իսկ 1-ին չափաբաժնով նախատեսված՝ ***1.Ախտահանիչ խտանյութ՝ նախատեսված բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար***, մատակարարված ապրանքը չի համապատասխանել Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Համաձայն պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետի՝ Պատվիրատուն տեղեկացրել է <<ԷՖԲԻԷՅ>>ՍՊԸ-ին և առաջարկել է շտկել արձանագրված անհամապատասխանությունը, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել, անհամապատասխանությունները չեն շտկվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ վականի մայիսի 4-ի N526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետը և պայմանագրի 8.11-րդ կետը՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ԱԽՏ-21/3 ծածկագրով պայմանագիրը:

<<ԷՖԲԻԷՅ>>ՍՊԸ-ի կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքի մասին համաձայնագրեր Հավելված 4.2 և Հավելված 5,1/ կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվի Կատարողի կողմից ներկայացված բանկ:

<<ԷՖԲԻԷՅ>>ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհարմարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

<<Քանաքեռ-Զեյթուն>> ԲԿ ՓԲԸ -ի տնօրեն Ա.Ավետիսյան